№ 44 Մարտի 23 (Ապրիլի 4) 1879 Մարտի 23 (Ապրիլի 4) № 44

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ում աւելի է տուած նրանից աւելի էլ կը պահանջվի։—Ներքին տեսութիւն։ Նամակ Նուխուց։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թարգէմանի էֆքիար լրագրի թղթակցութիւնը։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ՈՒՄ ԱՒԵԼԻ Է ՏՈՒԱԾ ՆՐԱՆԻՑ ԱՒԵԼԻ ԷԼ ԿԸ ՊԱՀԱՆՋՎԻ

Թիֆլիսի հայերից շատերը վրդոված են այն մեր յօդուածներից, որոնց մէջ մենք յարձակվում էինք Թիֆլիսցի հայերի պակասութիւնների վրա։

Այդպիսիներին մենք կը յիշեցնենք Աւետարանի այն նշանաւոր խօսքը, թէ ում աւելի է տուած, նրանից աւելի էլ կը պահանջվի։

Ի՞նչ կասէիք եթէ «Մշակը» անխնայ յարձակվէր, օրինակ, այնպիսի անշան քաղաքների վրա, ինչպէս Հին-Նախիջևան, Ղըզլար, կամ Սղնախ, և այլն.... Դա ծիծաղելի կը լինէր, դա կը նշանակէր պատերազմել քամուջաղացների դէմ....

Բայց բոլորովին ուրիշ նշանակութիւն ունի անխնայ յարձակվել Թիֆլիսի պէս մի քաղաքի դէմ, որ յիսուն հազար հայ բնակիչ ունի, որ իր բազմահայութեամբ աշխարհիս երկրորդ քաղաք է, որ բոլոր ռուսաստանցի հայերի մտաւոր և առևտրական կենտրոն է համարվում, որ կովկասեան փոխարքայութեան մայրաքաղաքն է, որտեղ կենտրոնացած են ռուսաստանցի հայերի բոլոր մտաւոր ոյժերը, ամբողջ հայոց ինտելիգէնցիան, որի վրա ուղղված են բոլոր գաւառացի հայերի հայեացքները, որի բնակիչների թէ լաւ և թէ վատ կողմերից բոլոր անդրկովկասեան հայերը միշտ օրինակ են առնում։

Դիցուք Թիֆլիսցին արհամարհում է մայրենի լեզուն,—գաւառացի հայն էլ Թիֆլիսցի հային իր կատարելատիպ համարելով, սկսում է արհամարհել իր մայրենի լեզուն։ Թիֆլիսում հայոց մամուլի բաժանորդների անշան թիւ կայ,—գաւառացի հայերն էլ Թիֆլիսից օրինակ առնելով չեն գրվում հայոց լրագրին։ Թիֆլիսցին անհոգ է դէպի ազգային գործերի առաջադիմութիւնը,—գաւառացին էլ առաջադիմութեանը թշնամի է դառնում։

Բայց հէնց որ գաւառացի հայը տեսնէր թէ Թիֆլիսում սկսում է ծաղկել մայրենի լրագրութիւնը, Թիֆլիսը հիմնում է հայոց թատրոն, Թիֆլիսցին հոգում է իր երկսեռ դպրոցների կառավարութեան մասին, Թիֆլիսը և նրա ինտելիգէնցիան գործունեայ, աշխատասէր, ընթերցասէր, առատաձեռն, ազգասէր է դառնում,—ի՞նչպէս էք կարծում Թիֆլիսի օրինակը չէր ազդի գաւառների վրա, գաւառացին չէ՞ր ենթարկվի մայրաքաղաքի ներգործութեանը....

Անխնայ յարձակվել քնած, մեռած, բայց մի և նոյն ժամանակ գաւառների համար կատարելատիպ և օրինակ համարվող Թիֆլիսի վրա, այն նշանակութիւն ունի, որ Թիֆլիսը իր լաւ թէ վատ ուղղութեամբ պատասխանատու է գաւառների լաւ թէ վատ ուղղութեան....

Թիֆլիսը վերաւորական է համարում երբ իր սարսափելի պակասութիւնների վրա յարձակումներ, անխնայ կրիտիկա է կարդում մայրենի լրագրութեան մէջ, բայց արդեօք աւելի վիրաւորական չէ՞ր լինի Թիֆլիսի համար, եթէ մտաւոր և բարոյական անկման հասնելով, նա ստիպված լինէր, բարոյապէս և մտաւորապէս վերածնվելու համար, օրինակ առնել ոչ թէ միայն մի Ալէքսանդրապոլից, Երևանից կամ Բաքուից, բայց մի որ և է փոքրիկ Ագուլիսից, Մեծ-Ղարաբլիսայից, կամ Դաւալուից....

Եւ եթէ Թիֆլիսը չը փոխի իր բռնած անտարբեր ընթացքը, չը դուրս գայ իր անշարժութենից, նա այնտեղ կը հասնի, որ ստիպված կը լինի մտաւոր առաջադիմութեան մէջ օրինակ առնել Ագուլիսի, Դաւալուի կամ Մեծ-Ղարաբլիսայի պէս գիւղերից....

Հատ յարմար բան է անհոգ և անտարբեր լինել, անշարժ մընալ, իր պարտաւորութիւնները չը կատարել,—բայց մի և նոյն ժամանակ իրան սաստիկ վիրաւորված ցոյց տալ, երբ պարզ երեսին ճշմարտութիւն են ասում, երբ անհերքելի փաստերով և անվիճելի դատողութեամբ ապացուցանում են թէ պարտազանց ես դէպի քո բարոյական և մտաւոր ամենատուրը պարտաւորութիւնները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

8 մարտի

Նուխեցիների անտարբերութիւնը, սառնասրտութիւնը դէպի հասարակական գործերը չափ ու սահման չունի։ Ամեն մարդ աշխատում է իր համար, չարչարվում է իր համար, նստում, վեր է կենում դարձեալ իր համար։ Խօսքերիս ապացոյց կարող է լինել հիւրանոցների պակասութիւնը, ուր երկու անծանօթներ միջոց են ունենում ծանօթանալ միմեանց հետ, արտայայտել իրանց մտքերը, գաղափարները, դիտաւորութիւնները. ապացոյց է կլուբների, թատրոնների, ժողովների, զանազան նպատակով կազմվող երեկոների բացակայութիւնը։ Այսպիսի տեղերում են, ուր հասարակական շահերն են առաջանում, ուր ընդհանուրի բարեկեցութեան խնդիրներն են արծարծվում, ուր հասարակական կարծիքը որոշ կերպարանք է ստանում, ուր ամեն մի անհատի միտքը, ճաշակն է զարգանում, և այլն։

Նուխեցիների անտարբերութիւնը դէպի իրանց քաղաքի արտաքին տեսքը դատապարտելի է։ Այդ անտարբերութիւնը նրանցից ամեն մէկին մահ է սպառնում։ Խօսքս քաղաքի կենտրոնում եղող կաշուի գործարանի (դաբախանի) վրա է։ Մինչ այժմ ամեն տեղ, սարսափած ժանտախտի հետևանքներից, ամեն միջոց գործ են դնում այդ տարափոխիկ հիւանդութեան առաջն առնելու, այստեղ քաղաքացիների անհոգութիւնից այդ կաշուի գործարանը սփռում է քաղաքի վրա իր զզուելի բուրմունքը, ուղարկում է նրան միերկու առուակներով իրանից արտադրելի գարշահոտ հեղուկը։ Իմացէք պատուելի նուխեցիներ, որ դուք քիներդ բռնելով և դաբախանի մօտից անցնելով ցաւից չէք ազատուի։ Այսօր այդ գարշահոտութիւնը ձեր հոտառութեանն է վնասում, վաղը նա ձեզ կեանքից կը զրկի. որովհետև նորա մէջն է ոչ միայն ժանտախտը, այլ խօլերա, տիֆ և այլ անբժշկելի հիւանդութիւնները։ Խնայեցէք ձեր կեանքին, և եթէ անձնասիրութեան զգացմունքը թոյլ է ձեր մէջ, դուք կրօնասէր էք, գոնէ իմացէք, որ մաքրասիրութիւնը առաքինութեան ճիւղերից մէկն է։ Մի ասէք թէ «քաղաքային պաշտօնեաներին արդէն յայտնի են մեր գանգատները, բայց նրանք դեռ ևս ոչինչ չեն անում»։ Ձեր գանգատները սաստիկ թոյլ են եղել. դուք բոլորդ միաձայն և ձեր ձայնը լսելի կը լինի։ Դաբախանէն տեղափոխել պէտք է. և ես խորհուրդ կը տայի հեռացնել այն քաղաքից դուրս Քիչ գետակի մօտ, որի մէջ կանհետանան այն բոլոր ապականութիւնները, որոնք առաջանում են կաշիներ պատրաստելուց։ Մինչև որ նուխեցիները կը սթափվեն իրանց անհոգութիւնից և կը բողոքեն նորից այս չարիքի դէմ, ես համարձակվում եմ այժմ հրաւիրել տեղական մարմնաւոր իշխանութեան ուշադրութիւնը քաղաքի վարակիչ ախտի վրա։ Ցուսով եմ, որ նա չուտով իր անելիքը կանի, ինչպէս, որ նա աշխատում է հեղեղի դէմն առնելու համար իր անհրաժեշտ միջոցները գործ դնելու։

Պէտք է ասել, որ Նուխին, ինչպէս Երևանը և ուրիշ քաղաքները, այսքան ժամանակ ենթարկվում է հեղեղների։ Այժմ, ինչպէս լսում ենք, սէրութիւնը ինժիներներ է ուղարկել հետազօտելու այն տեղերը, որտեղից կարելի է ծռել հեղեղի ճանապարհը դէպի մի այլ անվնաս կողմ։ Այն ծախսը, որ պէտք է գործ դրվի պատրաստելու համար քաղաքից դուրս մի բլրից դէպի միւս բլուրը, հասնում է 40,000 ռուբլու։ Տէրութիւնը պէտք է հաւաքի այդ փողը քաղաքացիներից և գուցէ ամբողջ գաւառից հարկի հետ միասին, որ չը լինի թէ զգալի թւի ժողովրդին այդ գումարի մեծութիւնը։

Ց. Հ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Դաւալու

Ձեր պատուական թերթի այս տարվայ 32 համարումը, Երևանից գրած լուրերի մէջ կար թէ Դաւալուից մի հայ կին են փախցրել, և շատերը կարծում էին, թէ փախցնողները թուրքեր են։ Ով ճանաչում է դաւալեցոց, կարդալով այդ տողերը կը զարմանայ, որովհետև դաւալուեցիք ամբողջ Երևանի նահանգումը ամենաքաջ մարդիք են։ Նրանց մէջ կան շատ աստիճանաւորներ (ЧИНОВНИКИ), որոնք մեծ քաջութիւններ են ցոյց տուել զանազան կռիւներում թուրքերի դէմ և անցեալ տարի էլ շատերը նրանցից Բայազէտում, Կարինում, Ղարսում յայտնվեցին պատերազմում քաջութեամբ, և խելքով։ Բացի սրանից Դաւալու մէկ հայ գիւղ է 30 կամ 40 թուրք ու քիւրդ գիւղերի մէջ և բոլորի վրա էլ ահ ու դող է գցել։ Դաւալուեցիք ուրիշ հայերի նման անզէնք չեն և մահմետականներից չեն վախում, այլ ընդհակառակը իրանց ծառայ և մինչև անգամ ստրուկ կամ քրիստոնեայ են դարձնում։ Այս բոլորը մտածելով, ընթերցողը չէ կարող հաւատալ այդ լուրին։ Այս պատճառով ես կամենում եմ այդ անցքի եղելութիւնը պատմել ու ցոյց տալ Դաւալուն ճանաչողներին, թէ նրանք իրանց կարծիքումը չեն սխալվի։ Դաւալու գիւղի մօտ գեներալ Կախանովի հողերի վրա բնակված են մի քանի տուն ասորիներ որոնք ռուսաց դաւանութեան են։ Դրանց մէջ կար մէկ որբ կին, որը, ինչպէս պատմում են, սիրվել է մէկ թուրքի վրա, որի հետ էլ փախել էր։ Իսկոյն ասորիները այդ լուրը տանում են Դաւալու և դաւալուեցիք չը կարողանալով համբերել թուրքի արած համարձակութիւնը, երկու հարիւր ձիաւորով գնում են այն թուրքի գեղը, բայց կնիկը այնտեղ չէ լինում։ Այս քանի ժամանակ է, որ դաւալուեցիք չը նայելով որ կինը իրանց գիւղացի կամ հայ չէ, մեն են գալիս չրջակայ թուրքերի գիւղը, բայց կնկան դեռ չեն գտել։ Այս անցքը կարելի է մեծ թշնամութեան պատճառ լինի Հայկի, Վարդանի և Վահանի այս քաջ թոռների ու չրջակայ թուրքերի մէջ։ Նամակս վերջացնելով կասեմ, որ դաւալուեցիք ինչպէս առաջ քաջ, ազգասէր և ուսումնասէր էին, այժմ էլ այնպէս են, որը, ցոյց տուին շատ հայ գաղթականներ իրանց մօտ պահելով և այս

քանի օրերումս 421 ռուբլ ընծայելով «Արարատեան ընկերութեան» օգտին, և խորհուրդ կը տամ բոլոր հայերին որ դաւալուեցիներից օրինակ առնեն։

Գ. Դ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Եսաուլ, 9 մարտի

Ուղարկում ենք ձեզ յօգուտ «Արարատեան ընկերութեան» տասն ռուբլ, պարտաւորվելով վճարել մի և նոյն գումարը ամենայն տարի։

Կարդալով պարոն Բ. Յ. Ղալամքարեանի նամակը ձեր պատուական լրագրի № 31-ում, չենք կարող մի և նոյն ժամանակ չը յայտնել այստեղ մեր խորին համակրութիւնը դէպի գովելի և օրինակելի գործը ազնիւ պարոնի, որ նուիրում է իւրաքանչիւր տարի քսան ռուբլ յօգուտ նոյն ընկերութեան։

Թող ներէ մեզ պատուարժան պարոնը մեր անհամեստութիւնը, եթէ խոստովանում ենք ասել, որ նրա նախանձելի օրինակն է, որ ազդեց մեզ վրա գցել և մեր չնչին լումայն ազգային գանձանակը։

Եթէ չենք սխալվում, Թիֆլիսի պարոններից առաջինն է պ. Ղալամքարեանը, որ ցոյց է տալի այսպիսի մի մեծ համակրութիւն դէպի ազգային գործը։

Մենք յոյս ունենք, որ Թիֆլիսի բոլոր հայազգի պարոնները, տիկիններն և օրիորդները մեծ ուրախութեամբ կը նախանձեն նոյնպէս և կը հետևեն Բ. Յ. Ղալամքարեանի օրինակին։

Թոյլ ենք տալի մեզ խնդրել նոցանից ում ներում են հանգամանքները, որ յանձն առնեն տարեկան ստորագրվողներ հաւաքել Թիֆլիսի պարոններից և տիկիններից յօգուտ «Արարատեան ընկերութեան» և բաղմացնել նրանց թիւը։

Բոլոր սրտից յաջողութիւն ենք ցանկանում այդպիսի մի ազգանուէր գործում։

Բժիշկ Միրիմանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 21-ին ԹԻՖԼԻՍԻ Կրուժօվի դահլիճում պ. Ֆ. Կէսնէր կոնցէրտ է տուել։ Երիտասարդ պիանիստը, եթէ չարունակի աշխատել, գեղեցիկ ապագայ է խոստանում։ Մասնակցում էին կոնցէրտին տիկին Դէկեր-Շէնկ և մեր Թիֆլիսի մի քանի երաժիշտներ։ Տիկին Դէկեր-Շէնկ, ինչպէս միշտ, ծափահարութիւններ ստացաւ և նրան կրկնել տուեցին նրա գեղեցիկ երգերը։

Մարտի 20-ին ԹԻՖԼԻՍԻ կրուժօկի դահլիճում երիտասարդ ռուս օֆիցէր, պ. Վարապաև մի դասախօսութիւն կարդաց թելեֆոնի, միկրոֆոնի, ֆոնոգրաֆի և ուրիշ այդ տեսակ նոր գիւտերի վրա։ Դահլիճը լի էր ընտիր հասարակութեամբ։ Դա գուցէ Կրուժօվի այս տարվայ բոլոր դասախօսութիւններից ամենաաջողված դասախօսութիւն էր։

Պ. Ա. Զաքարեանց, որ մի քանի ժամանակ թղթակցում էր մեր լրագրին ՇԱՄԱԽՈՒՑ, խնդրում է մեզ յայտնել, որ «Մշակի» № 27 բանասիրականի բաժնում տպված «Ես նրան չեմ գնայ» վերնագրով յօդուածը իր հեղինակութիւնը չէ, ինչպէս կարծում են մի քանի պարոններ։

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ հաղորդում են. «Մարտի 8-ին առաւօտեան 4 ժամին այստեղ երկրաշարժ պատահեցաւ։ Քաղաքը չէ վնասվել։ Վերջին ժամանակները այստեղ գողութիւնները սաստկացել են։ Եղանակը լաւ է անցնում, ծովը խաղաղ է։ Մի շաբաթ է, որ Բագուի և Աստրախանի մէջ սկսվել է նաւագնացութիւն։

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ «Արարատ» ամսագրի ագուլեցի բաժանորդները դեռ չեն ստացել յիշեալ ամսագիրը, չը նայելով, որ արդէն երկու համարներ հրատարակված են։ Գողթնեաց գաւառի գործակալ քահանայ Տէր-Մովսէս Մելիք-Ստեփանեանցը սովորութիւն ունի երեք կամ չորս ամիսներով իր մօտ պահել «Արարատի» օրինակները և յետոյ բաժանորդներին յանձնել։

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ, որ Զարեքայ Անապատի վանահայրը ոչնչացնում է Անապատի անտառը և վանքին ոչինչ օգուտ չէ տալիս։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ հաղորդում են, որ տեղացի երեխաների մէջ բօղազի ցաւ է տարածված։ Հայր Բաստամեանի սենեակը, որ գտնվում է սուրբ Գայանէի վանքում, ցերեկով մըտել են գողեր և 700 ռուբլ արժողութեան իրեղէններ են տարել, իսկ Էջմիածնի վանքի պարիսպում գտնված Ցարութիւն եպիսկոպոսի սենեակից գողացել են 9000 ռուբլ։ Երևի գողերը ի նկատի են առել, որ հոգևոր հայրերին վայել չէ հարստութիւն դիզել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻԼԻՔԻՆ

«ԹԷՐՃԷՄԱՆԸ ԷՖԷՖԻԱՐ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ա.—Վանի մէջ հայ ոստիկանութիւն։ Բ.—Վանի ընկերութիւնները և վարժարանները. Ա.—Կը սպասէք թերևս որ իմացնեմ ձեզ թէ ի՞նչ բարեկարգութիւններ սկսած են գործադրուիլ Հայաստանի մէջ։ Դեռ այդ բաղդաւորութիւն չունեցանք և չը գիտեմ ալ թէ երբ պիտի ունենամք։ Առայժմ անկարգութիւններն դեռ կը շարունակուին։ Մի հայ ոստիկան, Վարդան Տիլպոյեան, զոր կառավարութիւնն յատկացուցած է մեր առաջնորդարանի, մահամերձ վիճակի մէջ կը գտնուի այժմ։ Անցած շաբաթ երեկոյեան ուշ ժամանակ երբ իւր տուն կը վերադառնար, յանկարծ մի թուրք կը յարձակի վրան վիզն փաթթուած շալով խեղդամահ անել կաշխատի, մարդեր վրայ կը հասնին, հազիւ կազատի մահէն։ Այժմ անկողնի կը ծառայէ և դեռ մահի և կեանքի մէջ կը տատանի։ Զարագործն յայտնի անձ մ'է, բայց ձերբակալուած չէ ցարդ... Երբ կառավարական պաշտօնատար Հային, ոստիկան Հային այդպիսի բան կը պատահի, ալ ուրիշների նկատմամբ գրեն աւելորդ կը համարիմ։ Հայ ոստիկաններն որք 6—7-ի չափ կան, այս գործէ գրգռուելով, բողոքեր և յայտներ են թէ պիտի պարտաւորուին հրաժարիլ իւրեանց պաշտօնէ։

Բ.—Թէ մի մխիթարական բան կայ Վանի մէջ, սա է որ ժողովրդի զգացումն սկսած է փոքր ի շատէ արթննալ. երիտասարդներ, պատանիներ, սկսած են ընկերութիւններ կազմել. բայց այդ բանի մէջ, որպէս ամէն սկզբնական գործերի մէջ, աւելի եռանդ կը տեսնուի քան թէ գործունէութիւն։ Լաւ է որ այդ պարոններ իրարի հետ միանալով, զօրութիւն կազմեն, քան թէ իրարմէ անջատ բազմաթիւ ընկերութիւններ կազմեն, մի և նոյն նպատակով, կամ որպէս մի քանիներն գրեթէ աննպատակ։ Այդ ընկերութիւններէն մի քանի նոր աւելի մեծ նշանաւորութիւն ունեցած են իմ աչքի առջև, կը յիշատակեմ այստեղ։

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ընկերութիւնն, մի մասնաւոր վարժարան բացած է որ եօթը տարիէ հետէ կը շարունակուի։ Վերջին ժամանակներ այդ վարժարանի նիւթական և ուսումնական հաստատութիւնն իւր վրայ առաւ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ընկերութիւնն որ կազմուած է «Հայկազնեան ընկ.» վարժարանի նախկին սաներէն։ Հայրենասէր ընկերութիւնն իւր բաժանորդներէ Նաթանեան Մ. և Սաֆրաստեան Խ. էֆէնտիներն տեսուչ կարգած է այդ վարժարանի, որ այժմ Վանի ամէն վարժարաններէ լաւագոյնն է։ Հայրենասէր ընկերութիւնն ունի նա և մի լաբան ուր ամէն երկու շաբաթն մի անգամ հրապարակախօսութիւններ կը լինին. ունի կիրակնօրեայ վարժարան ուր ամէն կիրակի օրեր դասեր կը խօսուին հասակաւոր ազգայիններին։ ՍԱՆԴԽՏԵԱՆ ընկերութիւնն ինը տարի է որ օրիորդական վարժարան բացած է Վանի մէջ։ Աւելորդ է ասել թէ այս ընկերութիւն որչափ համակրելի է իւր նպատակի համար։ Վանի մէջ 8 վարժարան կայ արական սեռին համար. օրիորդների համար 2 վարժարան միայն, մին՝ Այգեստանի մէջ Սանդխտեան վարժարան և միւսն՝ քաղաքին մէջ Շուշանեան վարժարան։ Բազմաթիւ ընկերութիւններ կը կազմուին այստեղ գրեթէ աննպատակ կամ նոյնանման նպատակներով, բայց մի խումբ չը կայ որ միանար Սանդխտեան ընկ. հետ, բաւական հասոյթ ունենար և բարեկարգէր այդ վարժարան։ Ազգային կեանքի յեղափոխութիւնն ընտանեկան շրջանէն կը սկսի, Վանի մէջ մանաւանդ, որ բանական կինն դատապարտուած է անբան (անխօս) լինիլ, ուր գրեթէ ընտանեկան կեանք չը կայ ընտանեկան շրջանին մէջ մի մեծ յեղափոխութիւն հարկաւոր է զոր շատ դժուար կերևի կատարել։ Ով պիտի ասէ զայդ. Սանդխտեան վարժարանն որ իւր ներկայ դրութիւնով մի մեծ բան չը խոստանար ապագային համար, այս նոր ժամանակի մէջ, հինցած, փտած մէթոտներով դեռ կաշխատին այնտեղ դաստիարակել Վանի ապագայ մայրերն։

Դասախօսութիւններն անգամ հին մէթոտով կը շարունակուին. կը չարչարեն օրիորդների յիշողութիւնն, չեն աշխատիր մշակել դատողութիւնն։ Ազգային Պատմութիւն, և գրականութիւն ուսանող օրիորդներ չը կան արդէն. ընթերցանութիւնն ալ, փոխանակ հնչական նոր մէթոտի, հեգական հին մէթոտով կը սովորեցնեն դեռ, որպէս և Վանի միւս վարժարաններին մէջ։

Աշակերտուհին մինչև որ չը կարողանայ կարդալ «Մեծ Սաղմոսը» գիր գրել չեն տար։ Մինչդեռ արդի մանկավարժական դրութիւնն կը պահանջէ որ միանգամայն սկսուի ընթերցանութիւն և գիր ուսուցանել աշակերտին։ Ուշինսքիի մէթոտն որ ընդունուած է Ռուսաստանի ամեն Հայ վարժարանների մէջ *) դեռ բոլորովին անծանօթ է այստեղ։ Մի նոր ընկերութիւն ալ կազմուած է ԽՆԱՄԱՐԱՐ անուն, որ նպատակ ունի որք և աղքատիկ Հայ երեխայներուն հաց և լոյս տալ միանգամայն։ Այժմ 7-ի չափ սաներ ունի որք միաձև հագուստով զգեստաւորուած վարժարան կերթան. նոցա ուսեստի և բնակութեան ծախքեր Խնամատար ընկերութիւնն կը հոգայ։ Աւելորդ կը համարիմ ասել թէ որչափ քաջալերի արժան է մի այսպիսի բարենպատակ ընկերութիւն։

Ուրիշ ընկերութիւնների նկատմամբ ալ ուրիշ անգամ կը խօսիմ երբ առիթ ունենամ տեսնել իւրեանց գործեր։

*) Պէտք է խոստովանիլ թէ Ռուսաստանի Հայեր աւելի հետամուտ են մանկավարժական նոր մեթոտներ իմանալ և ընդունիլ իւրեանց վարժարանների մէջ քան թէ մենք, Թիւրքիայի Հայերս. մեր մէջ մանկավարժական նոր մեթոտների համեմատ յօրինուած դասագրքեր գրեթէ չը կան դեռ։ Նախակրթարանների մէջ գրաբար թէ աշխարհաբար լեզուն պէտք է ուսուցանել. այդ խնդիր որ մեր մէջ դեռ վէճի տակ է, վաղուց արդէն լուծուած է, Ռուսաստանի Հայերին համար։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 4 մարտի

Խորհրդարանական մնայուն ցանձնաժողովը կը շարունակէ իւր աշխատութիւններն, թէպէտ տակաւին մեծ գործ մը չը տեսանք, սակայն մեծ յոյսեր ունիմք։ Ցանձնաժողովը գաւառական առաջնորդաց շրջաբերականներ խրկելով տեղական պիտոյից վրայ հրահանգներ կուտայ։ Այդ շրջաբերականներն նշանակութիւն ունին. Ցանձնաժողովն այնպէս կը պատրաստէ Հայաստանի ազգային պաշտօնական մարմիններն որ նոքա Պօլսոյ շարժմանց համաձայն շարժին և ի հարկին Ցանձնաժողովը կարող լինի ասել թէ ինչ որ ինքն կը պահանջէ Հայաստանի հայուն պահանջածն ալ այն է։

Սակայն հարստահարութեանց տեղեկագիրներն միշտ Կ. Պոլիս կը հասնին և մեք ալ զանց կանեմք զանոնք չարունակ հաղորդել. Կ. Պոլիս փառաւոր ապարանքի մը մէջ կը բնակին քիւրդ Պէտրխան Պէյի որդիքն, Տիգրանակերտի կողմերը սոքա տակաւին քանի մը ամիս առաջ ապստամբութեան դրօշ պարզած էին թրքաց դէմ, թողունք որ մեծ չարիքներ հասուցին տաճկաց, որչափ աղետի պատճառ չեղան Տիգրանակերտի մեր տարաբաղդ եղբարց։ Պէտրխանի զաւակներն տեսան հայ գիւղերն որչափ կարող եղան. թիւրք բանակն որ կերթար զսպել ապստամբներն օգուտ կը քաղէր այս առթէն ինքն ալ իւր հարուածներն տալու հայ գիւղացւոց։

Ահա մի օրինակ զոր կը պատմէ Կ. Պոլսոյ հայ թերթի մը թղթակիցն։

Պէտրխանի որդիքն բազում գիւղեր այրելէ վերջ կը յառաջանան Տեհ անուն բազմահայ գիւղին վրայ. գիւղէն մէկ ժամ հեռու տաճկաց և քիւրդերու մէջ կռիւ տեղի կունենայ, վերջիններն կը յաղթուին և կը փախչին, և կառավարութեան կանոնաւոր զօրքն կը դառնայ դէպի Տեհ։ Հայերն որ բաւական տառապանք կրած էին կը կարծեն թէ Օսմանեան զօրքերն իրենց փրկիչ պիտի լինեն. քահանայն, գիւղին երեցելիներն և ժողովուրդը զօրաց ընդ առաջկելեն, և տէրութեան զօրքերն հրացանի հարուածներով ցիրուցան կանեն խեղճ ժողովուրդը. գլխաւորներն կը հրամայեն կողոպտել գիւղը. կառաղի զօրքերն կը տարածուին գիւղի մէջ կը թալանեն, կը կողոպտեն, կայրեն, կը լմնցնեն. «կանայք և աղջկունք լլկեցին, պղծեցին երկու կողմէն գործածելով, կըսէ նամակագիրը, և երկու հայ Տհեցի ալ սպանեցին կնիկներն անոնց չը յանձնելնուն համար հակառակ բարեխնամ տէրութեան կամաց»։

Այս գիւղն որ տարին 1,000 լիրա օսմ. տուրք կը վճարէր այսօր աւերակի կոյտ մ'է.

Վերջացաւ ապստամբութիւնը, ապստամբներն կը շրջին ազատ, իսկ հայ ժողովուրդի կրած հարուածներն ով պիտի տուժէ։

Սեբաստիայէն կը գրեն թէ Միր Ալի, որ այնքան աւերում և սպանութիւններ արաւ թողեր Սերաստիան և գացեր է առանց երաշխաւոր մը տալու։ Այս չարագործը դատաստանի կը կանչուի օր մը և կը ներկայանայ դատարանին մէջ զինեալ և իւր սուրը ցոյց տալով դատաւորաց կասէ «իմ Շերիաթս (օրէնք) սա թուրիս ծայրն է. բոլոր հայոց գիւղերն պիտի աւերեմ, բնակիչները բնաջինջ պիտի ընեմ և իմ մարդիկներս պիտի բերեմ հոն բնակեցնեմ»։ Եւ այսպիսի վայրենի արարած մը ազատ կը թողուն։

Մեծահամբաւն Ֆարսօ որ Բաղէշ գիւղօրէից սարսափն է կերթայ Ղուլթիկ գիւղն, կը մերկացնէ սուրն, կը կապէ գիւղացիներն և զամէնքն ալ կը սպառնայ թրէ անցնել եթէ չը վճարեն իւր պահանջած տուգանքներն. կը մերկանան խեղճերն և կուտան ինչ որ Ֆարսօ կը պահանջէ։ Ղուլթիք գիւղէն ոչինչ հեռու է զօրաց բանակ մը և զօրապետ մը, անտարբեր հանդիսատես կըլլան. վայ հայ գիւղացւոց եթէ յանդգնին հարստահարիչներու դէմ ձեռք վերցնել. իրենց պատուհասն կը գտնին և զօրքերէն։ Ժողովրդի կողմանէ Վանայ կուսակալութեան մօտ շատ աշխատութիւններ եղան որ ձեռբակալել տան Ֆարսօն և իւր արբանեակներն, սակայն մինչև վերջին օրերս անհնարին եղած էր.

Մնայուն Ցանձնաժողովը իւր ազդեցութիւնը պիտի բանեցնէ այսպիսի դէպքերու մէջ. նախորդ նամակաւ մը գրած էի թէ Աղաբէգեան Սարգիս էֆէնդի (եղբայր պ. Մարկոս Աղաբէգեանի, որ լաւ հայ է) անդամ կարգուած է բարեկարգութեանց համար Հայաստան խրկուելիք Ցանձնաժողովոյ և թէ այս ընտրութիւնէն գոհ չեմք. իմացանք թէ Պատրիարքարանի դիտողութեանց վրայ և դեսպանաց աջակցութեամբ պ. Սարգիս Աղաբէգեան Ցանձնաժողովոյ անդամ լինելէ դադրած է։ Շատ գոհ եմք, բայց կարեւոր խնդիրն այս է որ Պատրիարքարանը կարծեմք ինքն պիտի ընտրէ ինչպէս որ ուզէ Ցանձնաժողովոյ հայ անդամներն. եթէ արդարև այսպիսի իրաւասութիւն մը ձեռք բերէ Պատրիարքարան յաջող նշան մէ որ իւր պահանջած միւս բարեկարգութիւններն ալ կարենայ ընդունել. այդ բարեկարգութիւններն ուրիշ բան չեն, բայց եթէ Հայաստանի ինքնօրինութեան առաջին և գլխաւոր քայլերն։

Զէյթունի խնդիրն քաղաքական պատերազմի

մը ասպարէզ դարձած է. մէկ կողմէ կառավարութիւնը ամեն նենգութիւն կը գործէ, միւս կողմէ Պատրիարքարան անքուն կը հսկէ։ Գրեթէ պաշտօնական թիւրքի լրագիրն մի յօդուած հրատարակած էր մեզ համար անպատիւ։ Ֆրանսերէն Սթամբուլ թերթը կը պատասխանէ դմա, հրատարակելով միանգամայն Զօլագ Արթին վարժապետի (երեք յեղափոխականներէն մին) մէկ նամակը։ Ճարտար դրուած նամակ մ'է տեղական պարագայից յարմար. այդ նամակն մի առ մի կը գրէ թիւրքի թղթակցի բոլոր չարախօսութիւններն։ Երբ Արթին վարժապետի նամակն կարդաք աչքէ մի վրիպէք թէ թուրքիոյ մէջ թրքաց դէմ սուր չարժող մ'է գրողն, հետևաբար շատ զգոյշ պարտի լինել։ —

Իսկ Պատրիարքարանը կը փութայ անմիջապէս լրագիրներուն հաղորդել Զէյթունի նկատմամբ ի գործ դրուած բռնաբարութիւններն։ Հարկ չեմ համարիր մեր թերթերու այս մասին ինչ հրատարակութիւններ որ արին հոս համառօտել, այլ թերթերէն կորելով ձեզ կը խբրկեմ զոր անշուշտ կը հրատարակէք, և «Մշակի» ընթերցողք լուսի տեղեկութիւն կը ստանան։

Պատրիարք Սրբազանի հրաժարականի խնդիրն իւր նախկին վիճակի մէջն է։

Գիտէք թէ վարչութեան կողմէ առ ժամանակեայ փոխանորդ մը կարգուած էր լաւ եպիսկոպոս մը, այժմ դա ևս ելեր հրաժարական կուտայ, ասելով թէ քանի որ Ազգ. Ժողովն նոր փոխանորդ մը պիտի ընտրէ ինքն պարտաւոր է իւր հրաժարականն տալ, սակայն Ս. Պատրիարքի աղաչանաց անսալով առ այժմ իւր հրաժարագիրն ետ առաւ։ Մարտ 9-ին Ազգ. Ժողովն պիտի գումարի պատրիարքական փոխանորդն ընտրելու և Դրան ծանուցանելու համար. ինչ պիտի պատասխանէ Դուռն այս ծանուցագրին, ինչ նոր ցոյց պիտի անէ Ազգ. Ժողովն։ Պիտի ճանչնէ կառավարութիւնը Ազգային Ժողովոյ օրէնադիր հեղինակութիւնը կայրն։ Անհամբեր կը սպասեմք։

Բայց մինչդեռ այսպիսի կարևոր և կենսական հարցերով, ինչպէս են բարեկարգութեանց հարց, Զէյթունի հարց, Պատրիարքի հրաժարականի հարց, զորն ասեմ, զբաղած եմք, ահա յանկարծ մի այնպիսի նոր խնդիր կը ծագի որ մեծ մտատանջութիւն կը պատճառէ մեզ, մեզ համար նոր հոգսեր, նոր մտածութիւններ։ Այդ խնդիրն Հռովմէական Հայոց Պատրիարքական խնդիրն է. գուցէ ասէք, մեզ ինչ փոյթ այժմ այդպիսի խնդիրներ. սակայն չորս օրէ որ բոլորովին զմեզ կը զբաղեցնեն այդ առթիւ եղած դէպքերն. բացատրեմք և դուք ալ կըմբռնէք։

Մեր Հռովմէադաւան եղբարք Հասունեանի մի անվերջանալի խնդիր ունէին. Հասուն Պապականութեան հաւատարիմ ներկայացուցիչ իւր հօտն կուզէր զոհել Հռովմայ գահուն. իսկ ազատական մասն կը փափագէր Հռովմէադաւան մնալով հանդերձ իւր լեզուն, ազգութիւնն և եկեղեցական ծէսերն անփոփոխ պահել։ Զերկարեմք Հասուն Պատրիարք և Կաթողիկոս լինել կը յաջողի և այնօրէն հերձուածը կը սկսի իւր հօտի մէջ։ Հասուն մի Պապական կոնդակ կընդունի reversurus անուանեալ և կուզէ նորա գործադրութիւնը Դրնէն, ազատական մասն կը դիմադրէ, ժողովուրդ Հասունեան և Հակահասունեան կը բաժնուի։ Ֆրանսայի ձախորդութիւններն վրայ կը հասնին, Մահմուդ բաշա մեծ-վեզիր կըլլայ, Արևմուտքի հակառակ քաղաքականութիւն ունէր. կը պաշտպանէ հակահասունեան մասն, կը չնորհէ նոցա հրովարտակ Պատրիարք և Կաթողիկոս ընտրելու, — կաքսորէ Հասուն Հասունեանք չեն հնազանդիր հակահասունեանց զոր հերետիկոս կանուանեն, խնդիրն այս վիճակի մէջն է, Մահմուտ բաշա կիյնայ, Հասուն կը վերադառնայ, առանց պաշտօնի և լռիկ մնջիկ կը նստի. քանի անգամ բանակցութիւններ կըլլան երկու մասերն հաշտեցնելու, բայց անհնար կըլլայ։

Եւ ահա մի քանի օր առաջ յանկարծ կիմանամք որ Հակահասունեանց Պատրիարք Քիւբէլեան Արքեպիսկոպոսը դիմած է Հասունի նրա աջն համբուրած, և կը մեկնի Հռովմ, երթալ ներողութիւն խնդրել Պապէն։ Կը ծանուցանէ Դրան թէ իւր ընտրած փոխանորդներն պաշտօնէ դադրած են։ Ցուզում կը տիրէ հռովմէականաց մէջ. Պապէն մի հեռագիր կուգայ առ Հասուն չնորհաւորելով զնա և յայտարարելով թէ պատրաստ է ձեռքերն բացած ընդունելու իւր մոլորեալ զաւակներն և ներել նոցա։

Այս դէպքերն մեզ համար լոկ հետաքրքրական տեսարան մը պիտի համարուէին եթէ չը տեսնայինք թէ ինչպէս քաթոլիկ տէրութիւններն պաշտպան կը հանդիսանան Հասունի և ինչպէս Դուռը իւր աջակցութիւնը կը չնորհէ նմա։

Երբ Քիւբէլեանի դարձը կիմացուի (արդէն պատրաստուած էր) Աւստրիոյ դեսպանն, Ֆրանսայի դեսպանատան առաջին թարգմանն չնորհաւորութեան կերթան առ Հասուն, և Քիւբէլեանի Հռովմ մեկնած օրն, Ֆրանսայի դեսպանին աղաչանօք, Ֆրանսական չոգենաւն փառաւոր և արտաքոյ կարգի ընդունելութիւն կ'անէ Գերապայծառին։

Ֆրանսա ակներև յայտնի կանէ թէ ինքն պապականութեան պաշտպան է և մեք որ այժմ Եւրոպիոյ հետ աւելի սերտ յարաբերութիւն ունիմք պէտք է լաւ ուշադիր լինիմք այս դէպքերու։

Հանրապետական Ֆրանսա որոյ արտաքին գործոց և միանգամայն առաջին պաշտօնեայ նախարարն Լութերի աշակերտ մ'է, և Պօլսոյ դեսպանն Վոլթէրական մը՝ հանդիսաւոր կերպով անսխալ պապականութեան քաջամարտիկ զօրականին պաշտպան կը հանդիսանայ արևելից մէջ. և Արևելքի ժողովուրդիս կը հարցնեմք «Եւ դու՛ Ֆրանսա», ինչպէս չապշիմք, ինչպէս չը վշտանամք երբ մեր սիրած, պաշտած Ֆրանսան արևելքի մէջ արհամարհանաց առարկայ կը լինի. և մեք կարող չեմք մի բառ ասել Ֆրանսան արդարացնելու համար։ Վոլթէրի հայրենիքը պաշտպան Սիլլապլիսի, ով չարք ով բարք։

Ֆրանսա որ երկար առեններէ իրեն աւանդական քաղաքականութիւն մը չունէր կերևի թէ Նափոլէոն III քաղաքականութիւնը այսուհետև իրեն աւանդական քաղաքականութիւն պիտի անէ. մեզ անկ չէ թէ ինչ կանեն իրենց ներքին գործոց համար, ինչ կանեն կալուածատէրներն ապահովցնելու համար։ Այլ ինչ որ հարկաւոր է մեզ դա Արևելքի մէջ իրենց հետևած քաղաքականութիւնն է. արդ այսօր ալ յայտնի կերևի թէ հանրապետութիւնը կուզէ կղերական կուսակցութիւնը շահել, և Արևելքի մէջ Պապականութեան ջերմ պաշտպան հանդիսանալով Հռովմայ սիրան գրաւել։ Ահա այս քաղաքականութիւնը մեզ մտածութիւն կուտայ, զի մեք որ Ֆրանսայի վրայ յոյս ունիմք կը կարծէինք թէ կայսրութեան քաղաքական ընթացքն այլ ևս պիտի չը վերադառնայ։ Խաբուած եմք։

Բ. Դուռը որ մեծ ուշադրութիւն դարձուցեր է հայ ազգի վրայ և կը տեսնէ նրա խլրտումներն ինքնիշխանութիւն ի ձեռս բերելու համար, ո և է նենգութեան մը առաջ տեղի չը տար։ Արդ երբ Օսմանցին աշխարհի առաջ կասէ թէ Հայ ժողովուրդը մեծամասնութիւն չունի, կուզէ որ նոյն իսկ հայ ազգի մէջէն մի խումբ ելլէ և իրեն հետ ձայնակից լինի հայ ժողովուրդի պահանջած ինքնիշխանութեան դէմ։

Այս համոզումներէն առաջնորդեալ այսօր Բ. Դուռը իւր պաշտպանութեան ներքև կառնու քաթոլիկ Հայոց խումբը, կուզէ մի ջոկ մարմին կազմել, զօրաւոր և ազդեցութեան տէր։ Այդ քաթոլիկ մասն որ բոլորովին կղերին ձեռքն է միշտ զօրաւոր գործիք մը պիտի լինի Բ. Դրան ափերուն մէջ։ Հռովմէական կղերն որ Օսմանցին իրեն պաշտպան կը նկատէ, Հռովմէական կղերն որ միայն Հռովմ իրեն հայրենիք կը ճանաչէ միշտ հլու հնազանդ է իրեն բարերար տաճկին և կամակատար նրա։ Իսկ թիւրքերն ամէն տեսակ բարեկեցութիւն պիտի չնորհեն քաթոլիկաց այնպէս որ նոքա ամենևին դժգոհութեան տեղի չունենան։ Որովհետև Հռովմէական կղերին ազդեցութիւնը մեծ է ժողովուրդին վրայ Բ. Դուռն ալ կղերին ձեռօք ուզած դերն կընայ խաղալ։ Արդ ամեն ատեն որ Հայ ազգը ինքնօրինութիւն կը պահանջէ պիտի դանէ իրեն դէմ Հայ անուանք քաթոլիկ ժողովուրդ մը, սիրելի Օսմանցւոյ և որոց պաշտպան է քաթոլիկ Եւրոպայ։

Ահա այսպէս կը մտածեմք այսօր և չեմք սխալիր։ Այժմ կըմբռնէք թէ ինչու համար Հռովմէական Հայոց խնդիրն մեզ կը յուզէ։

Արդէն դառն ճաշակ մ'առած էինք։ Նոքա որք պիտի գրեն Հայ պատգամաւորաց պատմութիւնն յԵւրոպա կը բացատրեն եթէ ուզեն թէ Հասունեան կուսակցութիւնը ինչ խաղ խաղաց մեզ դէմ։

Ինչպիսի Մաքիավվելիական խարդախութեամբ աշխատեցան համոզել զԵւրոպա թէ Հայոց ինքնօրինութիւն չնորհելն քաթոլիկութիւնը Արևելից մէջ ջնջել է։ Այս ազդեցութեանց չնորհիւն էր որ պ. Վատտինկթօն Հայ անունն չարտասանեց վեհաժողովին մէջ։ Կարդինալ Ֆրանքինի նամակն առ պ. Տիւֆոր ուշադրութեան արժանի է։ Թողումք մէկ կողմ այն տարաձայնութիւններն որ իբր սուոյգ կասէին Կ. Պօլսոյ մէջ թէ ինչպէս հռովմէական կղերն շարունակ դեսպանաց պալատներն կը թափառէր Հայկական ինքնիշխանութեան գաղափարներն խեղդելու համար։ Այն օրերն շատ հեռու չեն և մեր մտքերէն չեն ելած։ — Այժմ վտանգն ակներև է. ինչ պէտք է անել. — Ինչ որ ըրինք մինչև ցայժմ։ Բացինք մեր գիրկն նոցա առաջ, չը զլացանք մեր անուն նոցա, չը դպանք նոցա խղճին. մատնակից ըրինք մեր ամէն գործոց, զոր կը ներէին մեր օրէնքներն. խաբուեցանք. ոչ։ Տեսանք և կը տեսնենք հռովմէական երիտասարդներ որ շարունակ մեզ հետ ձեռք ձեռքի տուած, անվհատ կաշխատին, անքուն կը հսկեն շատ գիշերներ, մի գաղափարի համար՝ Հայաստանի լուսաւորութիւնը։ Նոցա սրտերն ալ մեզ հետ կը բաբախին. տեսանք հռովմէականներ որ երբ ազգային ինքնօրինութեան խնդիրն ծագեցաւ փութացին գաղանի իրենց նուէրներն խբրկել ուսմանկէ։ Տեսանք հռովմէականներ որոց մօրուսի մէջ ճերմակներ կային անհամբեր ազգային փրկութեան ժամուն սպասած, ինչ որ կասեմք հռովմէական հայոց նոյն կասեմք բողաքական հայոց համար ևս։ Հարկ չէ ասել որ փոքրամասնութիւն մ'է, այլ չանանք այդ փոքրամասնութիւն մեծամասնութիւն անել։ Կը յաջողիմք. Կ. Պոլիս ազգային ամէն ընկերութիւններն իրենց մէջ ունին հռովմէական հայեր, որք ամենքն ալ ժրաջան կաշխատին. Տիգրանակերտ կը կազմուի մի ընկերութիւն Համազգային անուամբ որոյ կը մասնակցեն ամեն հայ առանց կրօնի խտրութեան. իրենց կանոնագիրն կասէ «ամէն հայ որ հայու արիւն կը կրէ»։ — Հայաստանի ամեն կողմն չանամք այս Համազգեաց ընկերութիւններն հաստատել։

Ձեզ կը խրկեմ այսօր հայ մամլոյ հրատարակութիւններն այս խնդրոյս նկատմամբ, իբր հետաքրքրական նիւթեր. սակայն պէտք է ըսել որ նոցա գաղափարներն մեր գաղափարներէ շատ հեռի են։ Մեք չեմք փափագիր որ հռովմէական հայք խմբովին վերադառնան Հայաստանեաց եկեղեցւոյ գիրկն, զի գէշ տպաւորութիւն կանէ Եւրոպայի վրա և իրաւունք կուտայ մեր թշնամեաց զրպարտանաց։ — Եւ արդէն անկարելի ևս է, նոքա որք հռովմէականութիւնը ի մօտոյ ճանչցած են կըրնան այս անկարելութիւնը ապացուցանել։ — Չեմք փափագիր որ ազատամիտ մասն միայն վերադառնան մեզ, նոքա որ ի բոլոր սրտէ հայ են, պէտք է մնան մեծ խումբին մէջ, քարոզեն և կռուին, իրենց նմաններու թիւն բազմացնելու համար։ Այս խնդիրներն բաւական զմեզ կը զբաղեցնեն. հարկ է որ ձեր ևս ուշադրութիւնն դրաւէ զի ազգին ապագային հետ առնչութիւն ունի։

Ինչ վիճակի մէջ եմք՝ մեզ հակառակ քաթոլիկ Եւրոպայ, մեզ հակառակ բողոքական Եւրոպայ՝ մեզ մահացու թշնամի թիւրք կառավարութիւնը, մեզ թշնամի մեր համարիւն եղբարց մէջէն, Սակայն եթէ մխիթարութիւն մը կայ սա է որ ամեն նոր թշնամութիւն նոր ոգի կուտայ հայոց, յուսահատութիւն չը կայ. կաշխատիմք առանց աջ և ձախ հայելու փութով Հայաստանի մէջ դաստիարակութիւն տարածել։ Զօրացնեմք մեր համակրանօքն Ազգային Երեսփոխանական ժողովն, որ այսօր աներկիւղ Հայաստանի չահերն կը պաշտպանէ. բուռն զօրութեամբ դրկեմք մեր եկեղեցին որ մեր թշուառ օրերու մէջ մեզ հետ լացաւ, և մեր ուրախութեան մասնակից կըլլայ։ Այս առթիւ պարտական եմք յիշել որ Կ. Պոլսոյ հայ կղերը ինչ որ ալ ըլլան իւր պակասութիւններն ազգային չահուց արի պաշտպան հանդիսացած է. մեծ պահքի մէջ եմք և գիտէք ինչ կը քարոզեն Կ. Պոլսոյ եկեղեցիներն. — Բէրլինի 61 յօդուածի գործադրութիւն — Հայաստանի ապագայ — հայրենեաց վերականգնութիւն. մեք այս քարոզներն լսեցինք, և այդ վարդապետներն որք եթէ քաջ Աստուածաբանութիւն չեն խօսիր դէթ քաջ կը քարոզեն հայութիւնը։

Հաղորդած եմ ձեզ թէ Կիլիկեան անուամբ մի նոր ընկերութիւն կազմուեցաւ։ Այդ ընկերութեան հիմնադիրներն Շահնազարեան նախկին աշակերտներն են և նախկին Վարդանեան ընկերութեան անդամներն են. գիտէք թէ որչափ լուսաւորութեան կարօտ է Կիլիկիա, մեր յոյսերէն մին։

Այդ ընկերութիւնը եռանդուն և ուսեալ երիտասարդներէ կազմեալ է. ժրաջան աշխատելու ձեռնարկած են. իրենց կը նախագահէ պ. Մինաս Չերազ որ այնքան լաւ կերպով ժողովի մը կառավարել գիտէ։ Այդ ընկերութիւնը Հաճընի Վարդանեան վարժարանը որ խեղճ վիճակի մէջ էր պիտի բարեկարգէ անմիջապէս և յետոյ Կիլիկիոյ մէջ մեծ վարժարան մը պիտի հիմնէ և Թերևս Նուպար-Շահնազարեան վարժարանը. այժմ միայն յաջողի հոն փոխադրել։ Մի ազնիւ և հայրենասէր երիտասարդ, Հրանտ Ասատուր, մեր ապագայ մեծ ակնկալութիւններէն մին, կարևոր նամակ մը կը հրատարակէ Մասիսի մէջ։ Այդ նամակն ընկերութեան հիմնադրութեան վրայ ճշգրիտ տեղեկութիւններ կը հաղորդէ, ուստի կարևոր մասունքն որ նոյն ընկերութեան կը վերաբերին ձեզ կը խրկեմք, կը յուսամք թէ կը հրատարակէք եթէ օգտակար դատէք։

Կասեն թէ Տփխիսցի հայք նամակ գրելու մասին ծոյլ են, նոր փորձ մ'ալ ունիմք. «Մասիսի» մէջ կը թղթակցէր «Ռուսաստանցի» ստորագրութեամբ մի պարոն, իւր վերջին նամակն յունվար 28 ամսաթիւ կը կրէր. ալ այնուհետև ոչ նամակ տեսանք և ոչ մի ինչ։ Արդեօք Ռուսաստանի հայոց վերաբերեալ տեղեկութիւններն սպառեցան։ Խնդրեմք յիշեալ պարոնէն որ իւր թղթակցութիւններ յօժարի շարունակել, զի տխրժանօք կը կարդամք։

«Մշակի» մէջ Ախալցխայէն ազնիւ Եղիսաբէթ Մամիկոնեանի հրատարակած նամակն, «Արարատեան ընկերութեան» նկատմամբ, լաւ տպաւորութիւն արաւ հոս, մեր թերթերն ալ տպեցին այդ նամակն։ Օրինակ կընծայեն ազնուհի Եղիսաբէթ Մամիկոնեանը Կ. Պոլսոյ հայ օրիորդաց և տիկնանց. «Փունջ» կասէ թէ քանի անդամներ խայտալով կարդացինք այդ նամակն»

Մարտ 5

Երէկ հասունեանք և հակահասունեանք առանձին առանձին ընդհանուր ժողով գումարեցին։ Հասունեանք որոշած են խնդրել Բ. Դրնէն որ Հասունը Պատրիարք ճանչցուի և հոն ժողովոյն մէջ հանրագիր մը ստորագրեր են. իսկ հակահասունեանք որոշեր են խնդրել Բ. Դրնէն որ Էնֆիէճեան վարդապետը պատրիարքական փոխանորդ ճանչցուի մինչև ցընտրութիւն պատրիարքի. հիմա երկու մասերն ալ կը փափագին զատ զատ մարմիններ կազմել և իրենց յատուկ կաթողիկոսներն և պատրիարքներն ունենալ։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՏԸՐՆՕՎՕ, 20 մարտի (1 ապրիլի)։ Մարտի 20-ին ազգային ժողովում մի կուսակցութիւն կազմվեցաւ, որը աշխատում է պաշտօնական քաղաքականութեան պահանջը հաշտեցնել ժողովրդական ցանկութեան հետ։

ԲԵՐԼԻՆ, 20 մարտի (1 ապրիլի)։ Դեռ չը կարողացան ազատվել այն դժուարութիւններից, որոնք վերարերում են խառն գրաւմանը։ Այստեղ սպասում են, որ ռուսաց քաղաքականութիւնը թոյլ չի տայ Անգլիային գործը երկարացնելու, և շուտով աւելի վճռողապէս կը գործէ։

Կ. ՊՕԼԻՍ, 20 մարտի (1 ապրիլի)։ Սուլթանը ստորագրեց այն իրադէն, որի մէջ Հասունը նշանակվում է հայոց կաթոլիկ համայնքի կրօնական և քաղաքական գլուխ։ Բ. Դուռը եւրոպական նահանգների վերանորոգութիւնների համար՝ մի առանձին ծրագիր կազմեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ կառավարութեան բարձրագոյն շրջաններում քննում են այն առաջարկութիւնը, որով կաթոլիկաց սեմինարիաներում բոլոր ընդհանուր առարկաների դասատուութիւնը պէտք է պարտաւորեցուցիչ համարել ռուսաց լեզուով անցնելու։

ՕԴԷՍՍԱ, 21 մարտի Երէկ գեներալ Տոտլէբէն և իշխան Իմէրէտինսկի ուղևորվեցան դէպի Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 21 մարտի (2 ապրիլի)։ «Morning Advertiser» լրագիրը հաղորդում է, որ Բրիտանական կառավարութիւնը վճռել է 5000 մարդուց բաղկացած մի բանակ ուղարկել արևելեան Ռումելիա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 21-ին։ Եկող շաբաթ սպասում են կոմս Լորիս-Մելիքովի վերադարձին։

Խմբագիր — Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

При понужденіи чинами Тифлисской полиціи гражданъ города къ очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ многіе изъ гражданъ отказываются отъ исполненія этого требованія на томъ основаніи, что очистка и ремонтъ улицъ и тротуаровъ лежитъ на обязанности не ихъ, а мѣстной Городской Управы, получающей съ домовладѣльцевъ для этой надобности установленую денежную плату. Приведенное заявленіе гражданъ города, даже нѣкоторымъ г. г. Мировымъ Судьямъ служило поводомъ къ освобожденію отъ взысканія лицъ, противъ которыхъ полиціею было возбуждено судебное преслѣдованіе за неисполненіе требованій по очисткѣ и ремонту улицъ и тротуаровъ города. Для устраненія объясненнаго недоразумѣнія было сдѣлано сношеніе съ Тифлисскимъ Городскимъ Головою, который 24-го февраля текущаго года за № 915 увѣдомилъ, что опредѣленія Городской Думы о переложеніи натуральной повинности по содержанію въ исправности и чистотѣ улицъ противъ частныхъ домовъ въ денежную не было, равно какъ и ежегоднаго сбора съ домовладѣльцевъ на покрытіе расходовъ по очисткѣ и перемощенію улицъ Управою не производится. Въ виду приведеннаго отзыва г. Городского Головы и на основаніи ст. 844, 845, 846, и 848, т. XIII уст. медиц. полицій по охраненію народнаго здравія вторично приглашаю г. г. домовладѣльцевъ къ немедленной очисткѣ дворовъ, улицъ и тротуаровъ города отъ навоза и другихъ нечистотъ, а также и объ исправленіи мостовыхъ. За неисполненіе настоящаго требованія виновные будутъ преслѣдоваться и отсылаться къ суду.

Тифлисскій Старшій

Полиціимейстеръ Полковникъ *Мерклингъ.*

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՈՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՏՆԵ ՔԱՂԱՔԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԵԿՈՎ։

Լոյս տեսաւ «ՓՈՐՁ» ամսագրի

Երրորդ (մարտի) համարը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. I. Հայի խնդիր. վիպասանութիւն Պերճ Պռոշեանցի, II Հրպատակութեան և խղճի գաղափարը նախնի հայոց մէջ, Կ. Կոստանեանց, III Մի ելեւս Կարնոյ նորագոյն պատմութիւնից, Ա. Երիցեան, IV Սիրոյ զոհեր, բանաստեղծութիւն Գամառ Քաթիպայի, V Մի Լեհացի Սավոնարոլ։ ՄԱՏԵՆԱԲՈՍՈՒԹԻՒՆ VI Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան, տիկին Սրբուհի Երիցեան, VII անեկդոտներ, Ժողովածու Գալուստ Շիրմազանեանի, Գրիչ. VIII Մի հրդեհ Ամերիկեան, կենսագրութիւն, Գ. Շահկեանց, ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Արևելեան խնդիրը և հայերը, X Ներքսէս պատրիարքի կոնդակը։ ՑԱՒԵԼՈՒԱԾ XI. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, Ա. Բաբայեան, XII յայտարարութիւններ։

Ստորագրուել կարելի է Թիֆլիսում՝ «Փորձի» խմբագրատան և կենտրոնական գրավաճառանոցում։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել խմբագրին հետևեալ հասցէով։

Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“.

Խմբագիր—հրատարակիչ Արքար Յովհաննիսեան

ԵՐԵՒԱՆՈՒՄ Աստաֆիեվսկայա փողոցի վրա, քաղաքի կենտրոնում ձեռնտու գնով ԾԱԽՎՈՒՄ Է քարից և կիրից շինած մի ՏՈՒՆ։ Տան մէջ կան տաս ԽԱՆՈՒԹՆԵՐ ամբարանոցներով, սառուցատուն և երեսուն և չորս ՍԵՆԵԱԿ ծառաների բնակարաններով և պատշգամբով տան ամբողջ երկայնութեամբ։ ԲԱԿԻ մեծութիւնը 2000 քառակուսի սաժէն է, բակի մէջ ԱՒԱԶԱՆ կայ։ Տան դիմացի կողմի ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ 63 արշին է, իսկ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ նոյն կողմից 24 արշին։ Ամբողջ տունը տարեկան 5600 ր. ԵԿԱՄՈՒՏ է տալիս։ Յիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Աբրամ Պապիկովին։ Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշի ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով։ ԱՐՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՑ։

3—4

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕРМАНЪ. на Гановской улицѣ въ домѣ Усопесіани. Имѣю честь извѣстить почтенеишему публику, что принимаю заказы своими товарами военныя и статскія платья и исполняю собственнымъ присмотромъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣется мужскія и дѣтскія костюмы заказы и продажа производится по весьма умѣреннымъ цѣнамъ.

1—10

ՌՈՒՍԱՑ ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստացվեցան 10000 ֆունտ ֆուչանի և կեախտի թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 կ. մինչև 8 ր. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ունեմ ապագայում գնողներից նոյնպէս ստանալ։ Ծախվում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Մլքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պոլոսուխին։

6—10

ՍԵՆԵԱԿՆԵՐ քրէհով են տրվում կահկապակիքով և ծառայով 10 ր. մինչև 20 ռուբլ ամսական վճարով։ Հարցնել Սապերնայա փողոցի վրա գինուորական գիմնազիայի դիմացը Յարութիւնեանցի № 12 տան մէջ։

1—3

Ազդ

Գառնիկ Ալէքսիանոս Յարութիւնեան, որը մականունը Սարբեան Սիվասցի. Կ. Պոլիս Բերայի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը դրաշարութիւն, ինքը բարձրահասակ, երկու տարի է որ անդրեացի վաճառականի մը հետ տակէ (Պոլիսէն) եկած շրջելուով Փոթի երթալու, և անկէ ալ Թիֆլիս անցնելու նպատակաւ. Ճամբայ եկած օրէս մինչև ցայսօր և ոչ մի լուր առնուած է. Հայրը մեռած է և մայրը և քոյր մը ունի. ով որ տեսած է յիշեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տալու շնորհի ընելը կաղաչուի։

ԱՆՈՒԷՐ ՔԵԱՍԻԲ ԳԵՂԵՑԻՆԵՐԻՆ» անունով նոր գուս եկած բրոշիւրը ծախվում է հատը 15 կոպէկով Թիֆլիսի Կենտրոնական և Զաքարիայ Գրիգորեանի գրավաճառանոցներում։ Հարիւրով առնողներին կը լինի 20% զեղչում, եթէ անմիջապէս դառնան դէպի մեզ այս հասցէով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакахъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Բժիշկ Աւետիք Բաբայեան (Բաբայեվ) ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան (Բաբայեվ) հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցողներին էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիևսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

7—10

ԼԱՐՇԻ խանութում Գոլոմինսկի հրապարակի վրա № 11 ծախվում են ամեն տեսակ թէ պարտիզային և թէ ծաղիկների ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բոլորովին թարմ են։

5—10

Въ Кукахъ, на Исарловской улицѣ въ домѣ № 9 ОТДАЕТСЯ ОДНА БОЛЬШАЯ СВѢТЛАЯ КОМНАТА съ отопленіемъ и прислугой. Спросить въ редакціи «МШАКЪ»

ԿՈՒԿԻԱՅՈՒՄ, Իսարլօվկայա փողոցի վրա № 9 տան մէջ քրէհով է տրվում մի ՄԵԾ, ԼՈՒՍԱՒՈՐ ՍԵՆԵԱԿ ՎԱՌԵԼԻՔՈՎ և ծառայով։ Հարցնել «Մշակի» խմբագրատանը։

3—10

ՄԱՐՏԻ 23. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մարտի 22-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	58
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1240	—
Վիգրէյնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրէյնի »	229	—
Մարսելի կուրսը 248—	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ժէ 113 գ.	100	—
Դաւրեժի բարաթը.	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	315	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու	7	30
» միւս տեսակը.	7	20
» չաքար աւազը.	5	40
» տրանզիտը.	6	20
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից.	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուչի	7	50
» թարաքամի	4	20
Աղիւրը Շորագալու	1	70
» Երևանի.	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ.	200	—
Կախեթունը.	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	55	—
Օֆէն մօկօր.	27	—
» վիանի	22	—
« Մարտին օյին	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա.	4	
Գերմանիա.	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիոն	6. 47	
Փոթի	9. 40	
	առաւ.	
Փոթիից	9. 13	
Ռիոն	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գօրի.	7. 5	4. 8
Թիֆլիս.	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի.	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն.	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7, իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տրակից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակից չորեքշաբթի և կիրակի։ Բելոկլուչի տրակից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան	8
Հնդկաստան	70
Եգիպտոս	37

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վենեբական և կաչու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վենեբական և կաչու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վենեբականկաչու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններից

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԹԻՖԼԻՍ. Ն. Զ. Բ. Ուղղանոն սաղմոսը արտագրել էք և մեզ ուղարկել. ուզում էք որ «Մշակի» մէջ տպենք։ Գցեցինք զամբիւղը։

—ԵՐԵՒԱՆ. Դ. Մ. Ասացէք, խնդրում ենք, ում համար կարող է հետաքրքիր լինել Դօղուզեցի գրագիր Գէվօի կենսագրութիւնը։ Մեզ ինչ որ նա 1000 ռուբլ է։

—ՂԱՐՍ. Ց. Զ. Նամակը հետաքրքիր չէ։

—ՇՈՒՇԻ. Ց. Տ. Գ. Շատ ուրախ ենք, որ եկաք այդտեղ. ձեր նամակները հետաքրքրութեամբ կը կարդացվեն։ Ցոյս ունենք, որ ձեզ յատուկ զննողական հայեացքով կը նայէք Շուշու և նրա շրջակայ գիւղերի գործերի դրութեան վրա։ «Մշակ» կուղարկվի։

Дозволено Цензурою 22 Марта 1879 г. Тифлисъ Տպարան Ց. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца